



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՐԴ

ք. Երևան

11.02.2016թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

ՍՑ-31/15

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.05.2015թ. թիվ 1/73-1/829985-15 գրությամբ ներկայացված «ՍՍ ԹՐԵՎԼ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00864004) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-31/15 բողոք), «ՍՍ ԹՐԵՎԼ» ՍՊԸ-ի 17.12.2015թ. գրությունը, Կենտրոնի 18.12.2015թ. թիվ 01/04.1/3791-15 գրությունը, ՀՀ ֆինանսների նախարարության Նոր Նորքի հարկային տեսչության 24.12.2015թ. թիվ 30-2/[1019390]-15 գրությունը, ինչպես նաև ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-31/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 09.02.2016թ. ներկայացրած եզրակացությունը պարզեց.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 18.05.2015թ. թիվ 1/73-1/829985-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «ՍՍ ԹՐԵՎԼ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

Վերոհիշյալ գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 13.05.2015թ. թիվ ԴՎԱ/1117 գրության և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները:

2. «ՍՍ ԹՐԵՎԼ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 22.05.2015թ. թիվ 01/04.1/1124-15 գրությամբ դիմել է «ՍՍ ԹՐԵՎԼ» ՍՊԸ-ին:

Ընկերությունը 17.12.2015թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 06.05.2015թ., «ՍՍ ԹՐԵՎԼ» ՍՊԸ-ն չի ունեցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն: Ընկերությունն ունեցել է սոցիալական վճարի պարտավորություն, որը ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով չի համարվում հարկային պարտավորություն:

3. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 48-րդ կետով նախատեսված «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-11/31» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված համապատասխան եզրակացությունը՝ 13.05.2015թ. թիվ ԴՎԱ/1117 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել «ՍՍ ԹՐԵՎԼ» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու վերաբերյալ տեղեկությունները:

4. ՍՑ-ԳԲԽ-31/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն»

ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 09.02.2016թ. եզրակացությունը և առաջարկել է ՀՀ ֆինանսների նախարարության 18.05.2015թ. թիվ 1/73-1/829985-15 գրությամբ ներկայացված «ՍՍ ԹՐԵՎԼ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00864004) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը մերժել:

5. ՍՑ-ԳԲԽ-31/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 18.05.2015թ. թիվ 1/73-1/829985-15 գրությամբ ներկայացված «ՍՍ ԹՐԵՎԼ» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ավիասպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-11/31» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՍՍ ԹՐԵՎԼ» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (06.05.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարերի գծով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 06.05.2015թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետով որոշել է Ընթացակարգի 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով երկրորդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՍՍ ԹՐԵՎԼ» ՍՊԸ-ին:

4. Պատվիրատուն ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 06.05.2015թ. կատարած հարցմամբ ՀՀ ֆինանսների նախարարությանը խնդրել է տրամադրել տեղեկատվություն Ընկերության կողմից 2015թ. մայիսի 6-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ:

5. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.05.2015թ. Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «ՍՍ ԹՐԵՎԼ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (06.05.2015թ.) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1481 ՀՀ դրամի չափով:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով որոշվել է. «Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված համապատասխան եզրակացությունը, համաձայն որի «ՍՍ ԹՐԵՎԼ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ՝ մերժել Ընկերության հայտը»:

7. Ընկերությունը 17.12.2015թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 06.05.2015թ., «ՍՍ ԹՐԵՎԼ» ՍՊԸ-ն չի ունեցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն, այլ ունեցել է սոցիալական վճարի պարտավորություն, որը ՀՀ հարկային օրենսդրության համաձայն՝ չի համարվում հարկային պարտավորություն:

8. Կենտրոնը 18.12.2015թ. թիվ 01/04.1/3791-15 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով հայտնել, թե Ընկերությունը **06.05.2015թ. դրությամբ** ունեցել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, թե ոչ:

9. Ի պատասխան Կենտրոնի 18.12.2015թ. թիվ թիվ 01/04.1/3791-15 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 28.12.2015թ. թիվ 1/73-1/42387 գրությամբ Կենտրոնին է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարության Նոր Նորքի հարկային տեսչության 24.12.2015թ. թիվ 30-2/[1019390]-15 գրությունը, համաձայն որի՝ «ՍՍ ԹՐԵՎԼ» ՍՊԸ-ն **06.05.2015թ. դրությամբ ունեցել 1481 ՀՀ դրամ սոցիալական վճարի պարտավորություն**, իսկ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ սոցիալական վճարը չի համարվում հարկային պարտավորություն և չի

ներառվում գնումների ընթացակարգերին մասնակցողների համար հարկ վճարողների պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքներում:

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Քննելով ՍՑ-ԳԲԽ-31/15 բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

«Կուտակային կենսաթոշակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետի համաձայն՝ սոցիալական վճարը՝ սույն օրենքով սահմանված կարգով և չափով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող նպատակային վճար է:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում հարկատեսակներն են՝

ա) պետական հարկերը՝

- շահութահարկ,
- եկամտային հարկ,
- ակցիզային հարկ,
- ավելացված արժեքի հարկ:

Օրենքով կարող են սահմանվել վերոհիշյալ հարկատեսակներին փոխարինող հաստատագրված վճարներ, շրջանառության հարկեր կամ արտոնագրային վճարներ.

բ) տեղական հարկերը,

- գույքահարկ,
- հողի հարկ,
- հյուրանոցային հարկ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ հարկային պարտավորությունը ներառում է հարկերի (այդ թվում՝ թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար նախատեսված), ինչպես նաև հարկային օրենսդրությունը և Հայաստանի Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հաշվարկված՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարների վճարումը:

ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին ուղղված 31.07.2015թ. թիվ 1/73-1/20480-15 գրությամբ հայտնել է, որ պարտադիր սոցիալական ապահովության վճարները սահմանված են եղել «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքով, որը գործել է մինչև 2012թ. դեկտեմբերի 31-ը, հետևաբար «Կուտակային կենսաթոշակի մասին» ՀՀ օրենքով սահմանված սոցիալական վճարը չի համարվում հարկային պարտավորություն կամ պարտադիր սոցիալական ապահովության վճար:

Այսպիսով, խորհուրդն արձանագրում է, որ ըստ ՀՀ ֆինանսների նախարարության 28.12.2015թ. թիվ 1/73-1/42387 գրությամբ Կենտրոնին ներկայացրած ՀՀ ֆինանսների նախարարության Նոր Նորքի հարկային տեսչության 24.12.2015թ. թիվ 30-2/[1019390]-15 գրության՝ «ՍՍ ԹՐԵՎԼ» ՍՊԸ-ն ***հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 06.05.2015թ., ունեցել է 1481 ՀՀ դրամ սոցիալական վճարի պարտավորություն***, ինչն էլ համաձայն «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի չի համարվում հարկային պարտավորություն կամ պարտադիր սոցիալական ապահովության վճար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 18.05.2015թ. թիվ 1/73-1/829985-15 գրությամբ ներկայացված «ՍՍ ԹՐԵՎԼ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00864004) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝



Արման Մնացականյան

Անդամներ՝



Ռոման Չոբանյան



Արայիկ Մնացականյան